ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԸ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՂՌԵՋՅԱՆ

Սրբազան երկվորյակների հավատալիքն ու պաշտամունքը գալիս է խոր հնադարից և կապված է աշխարհի ու մարդկության մասին, թերևս, ամենավաղնջական պատկերացումների հետ: Այդ պատկերացումների հիմքում, ինչպես իրավացիորեն գտնում է Ս. Հարությունյանը, ընկած է երկվության և, մանավանդ, երկհակադրության գաղափարը, որը խորհրդանշում է բնության ու հասարակության մեջ իրականում գոյություն ունեցող կամ այդպիսին ընկալվող երկու տարբեր, հաճախ հակադիր առարկաներ, երևույթներ կամ սկզբունքներ, որոնք սովորաբար անձն ավորվում են մարդկային կամ կենդանիների զույգ կերպարներում՝ իբրև արյունակից երկվորյակներ[1]: Երկվության, երկհակադրության այդ գաղափարն արտահայտված է հետևյալ հանելուկում. «Ի՞նչն ա, որ էրկու ա», որի պատասխանն է. «Երկինք-երկիր, արև-լուսին, դրախտ-դժոխք»[2]:

Երկնքի և երկրի երկվության, երկվորյակության գաղափարի նկատմամբ տեսակետ է արտահայտվել վերջերս Վահագնի երգի քննության առնչությամբ[3], ուր հեղինակը, հենվելով նախորդ հետազոտողների տեսակետների վրա (Մեյե, Տոպորով, Իվանով), երկի-ն, երկի-ր բառերի բաղաձայնային ն, ր *վերջավորությունների՝ իբրև հին հայերենի արական ակտիվ և իգական պասիվ ցուցիչներ, երկվորյակներին բնորոշ սեռական հակադրություն է տեսնում նույն* երկ *արմատով սկսվող այդ զույգ տիեզերական մարմինների միջև որպես երկմիասնական երկվորյակային հասկացություններ:*

Երկվորյակային նման հատկանիշներ են դրսևորվել նաև Արևի և Լուսնի վաղնջական թռչնակերպ և հետագա մարդակերպ պատկերացումներում: Արևի թռչնակերպ պատկերացումները պահպանվել են թե՛ հայ բանավոր ավանդության, մասնավորապես հանելուկների մեջ, և թե՛ հին նյութական մշակույթի հուշարձաններում[4]: Վասպուրականից գրառած արեգակին նվիրված հանելուկներից մեկում արեգակը պատկերացվել է կտուցին ոսկե օղ (= լական) բռնած թռչունի կերպարանքով: Հնագետ Հ. Մարտիրոսյանը արեգակի այս նույն պատկերացումը գտնում է Գեղամա լեռների ժայռապատկերներում և ուշ բրոնզեդարյան հուշարձաններ-

---

[1] *Տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 338:*

[2] *Տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, -2101:*

[3] Б. З у л у м я н. Архетип в структуре художественного сознания, памятник армянской эпической поэзии “Песнь о Ваагне”.– ИФЖ, 2007, № 3, с. 45–46.

[4] *Տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, № 9, 10, 11, 12:*

ռում[5]: Իսկ Ս. Հարությունյանը դարձյալ Վասպուրականից գրառված արևի մասին սույն հնավանդ հանելուկի՝ «Էրկու օսկի լայլակ (արագիլ), Առավոտման զանգեր տվին, ընցան ծովու վրեն, Իրիկուն վերջացան», ծանոթագրության մեջ նկատում է. «Ըստ այսմ ժողովրդի տիեզերական պատկերացումների մեջ արեգակը երկվորյակ անձնավորում կամ առարկայացում է ունեցել («Էրկու օսկի լայլակ): Նույն երևույթն է դիտվում նաև № 9 հանելուկի մեջ, որտեղ արեգակը պատկերացվել է թե՛ որպես թռչուն, թե՛ որպես ոսկե օղ»[6]: Մեզ թվում է՝ հետազոտողը միանգամայն իրավացի է, քանզի մ. թ. ա. 2-րդ հազարամյակից եկող արևային մի զարդանախշում թռչունը (հավանաբար, արագիլ) երկգլխանի է, որ նշան է նրա երկվորյակության[7]:

Արեգակի երկվորյակ պատկերացման նախնադարյան նշմարներ են պարունակում լուսատուների մասին պատմող ավանդազրույցները: Դրանցից մեկում պատմվում է. երբ կեսօրին արևը շատ է մոտենում երկրին և կարող է այն այրել ու մոխրացնել, այդ պահին նրա դեմ է ելնում մի մեծ թռչուն և վիթխարի թևերը տարածելով՝ հովանի է անում երկրին, որով պակասում է արեգակի ջերմությունը: Թռչունի թևերը կիզիչ արևից խանձվում են, և նա կիսամեռ ընկնում է ծովի մեջ, լողանում, կազդուրվում, բուժվում ու հաջորդ օրը դարձյալ ելնում է արևի դեմ՝ հովանի դառնում երկրին[8]: Այսպիսով՝ թռչունը հանդես է գալիս իբրև արևին հակոտնյա երկվորյակային կերպար: Իսկ մյուս առասպելական զրույցում արևը նստած է առյուծի մեջքին և սլանում է երկնակամարով: Առյուծը զինված է վիթխարի թրով և պաշտպանում է արևին քաջքերից[9]:

Արեգակի երկվորյակային հատկանիշները լիովին դրսևորվում են Արևի և Լուսնի մասին միասնական առասպելներում: Մասնագիտական գրականության մեջ միանգամայն արդարացիորեն հավաստված է, որ Տիեզերական ծառի վրա իրար դիմաց կանգնած սիմետրիկ զույգ թռչունները «հաճախ հարաբերվում են արևի և լուսնի հետ», թեպետ կարող են այլ գաղափարներ ևս արտահայտել[10]: Ս. Հարությունյանն արդեն հավաստել է, որ «վիշապ» կոչված ձկնակերպ քարակոթողների վրա, որոնց հնությունը հասնում է մինչև մ. թ. ա. III–II հազարամյակները, քանդակված են Տիեզերական ծառի (հաճախ՝ եռամաս) պատկերներ, որոնց գագաթին կամ միջնամասում փորագրված են իրար դիմաց կանգնած զույգ թռչուններ, որոնք խորհրդանշում են արև և լուսին զույգ լուսատուները կամ պտղաբերման ու արգասավորման գաղափարներ[11]:

---

[5] *Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 37–41:*

[6] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, էջ 216:*

[7] *Տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 39, նկ. 39:*

[8] *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1968, № 3–4:*

[9] *Նույն տեղում, № 1Դ:*

[10] Т. Е л и з а р е н к о в а, В. Т о п о р о в. Древнеиндийская поэтика и ее индоевропейские истоки.– Литература и культура древней и средневековой Индии. Сборник статей. М., 1984, с. 43.

[11] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, էջ 26-32:*

Երկվորյակների կապը Տիեզերական ծառի հետ դրսևորվել է նաև հին հնդկական ավանդության մեջ: Վ. Իվանովը ելակետային ծիսական խորհրդանիշ է համարում կնոջ կերպարի առկայությունը Տիեզերական ծառի մոտ, որ արտացոլված է Ռիգվեդայում: Նա կնոջ կերպարը համարում է Տիեզերական ծառին համարժեք հասկացություն: Այդ ծառի վրա պատկերված են երկու բարեկամ թռչուններ, որոնցից մեկը ճաշակում է քաղցր պտուղը, մինչդեռ մյուսը նայում է և պտղին չի դիպչում[12]: Ռիգվեդայի՝ Տ. Ելիզարենկովայի կատարած ռուսերեն թարգմանության մեջ ծառի վրա նստած այդ զույգ թռչունները կոչված են «երկու արծիվ»[13]: Տիեզերական ծառի այս համարժեքացումը կամ նույնացումը կնոջ հետ ուշագրավ է այն առումով, որ կենաց ծառը ևս ըստ մասնագետների իրավացի հավաստման, լինելով Տիեզերական ծառի տարբերակներից մեկը, տարբեր ավանդություններում մեծ մասամբ հանդես է գալիս իբրև կնոջ, մայրության խորհրդանիշ կամ ծայրահեղ դեպքում իբրև նրա կացարան կամ բնակարան[14]:

Այս հատկանիշով է օժտված նաև հայոց հարսանեկան ծիսակատարության մեջ փեսայի նշանավոր ծառը՝ իր ծառագովքով կամ ծաղկոցագովքով:

Թագւոր, ի՞նչ բերեմ քեզ նման
Քոյ կանանչ արևդ ի նման
Էն առաւօտն, որ կու ծաղկի
Ծաղիկն արևդ ի նման[15]:
Էն արեգակն որ բացվէր,
Բացվէր արևուդ նման[16]:

Կամ՝

Թագաւոր, ի՞նչ բերեմ քեզ նման,
Քո կանաչ արև քեզ նման,
Անուշ ռեհան (շուշան ծաղիկ, նարգիզ ծաղիկ,
դեղին կակաչ, աղբրանց արիւն և այլն)
Որ կը հոտէր,
Անուշ բուրէր քո թագուհին:

Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, «Փթթած ծառն ու ծաղիկն այս երգերի մեջ ներկայանում է իբրև սիմբոլ բեղմնավորվող մայր բնության, որի մի

---

[12] В. В. И в а н о в. Опыт истолкования древнеиндийских ритуальных и мифологических терминов, образованных от “Asva-конь”.– Проблемы истории языков и культуры народов Индии. Сборник статей. М., 1974, с. 75.

[13] *Տե՛ս* Ригведа, Мандалы I–IV. М., 1989.

[14] *Տե՛ս* В. Т о п о р о в. Дерево жизни.– Мифы народов мира, т. I. М., 1980, с. 397.

[15] *Ա ս. Մ ա ց ա կ ա ն յ ա ն. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 290:*

[16] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 123:*

մասն է «ծլող, ծաղկող, պտղող» նորահարսը»[17]*: Այս հարսանեկան ծաղկոցի երգերը, հարսի և փեսայի գովքը «արեգակի նմանությամբ» գալիս են խոր հնությունից, «նույնիսկ նախապատմական ժամանակից»*[18]*:*

Փեսայի միջնադարյան մի ծառագովքում ծիսերգային հարց ու պատասխաններից մեկում ասված է՝ «Ծաղկեցաւ ծառս կենաց, /Տեսեք այն ո՞րն է», որին անմիջապես հետևում է՝ «Ծաղկեցաւ ծառս կենաց / Էն թագաւորն է»[19] *պատասխանը, բայց այսուհանդերձ փեսայի ծառը խորհրդանշում է նորահարս թագուհուն: Այս երգի կրոնական մի տարբերակում բացահայտ ասված է. «Ծաղկեցաւ ծառն կենաց՝ Աստուածածինն էր. /Լուսեղեն պտուղ եբեր՝ Իւր միածինն էր»*[20]*, այսինքն՝ հարսանեկան կենաց ծառը խորհրդանշում է մայրական սկզբունքը: Այս տեսակետը, ըստ որոշ մասնագետների (Վ. Իվանով, Վ. Տոպորով և այլն), արտահայտություն է գտել հին կտակարանյան կենաց ծառի մարդակերպ փոխարինողներից մեկի՝ Եվայի անվան մեջ, որի պատճառով մեկընդմիշտ կորստյան մատնվեց կենաց ծառը:*

Եվա *հին եբրայերեն "Hawwa" նշանակում է «կյանք»: Ըստ Հին կտակարանի, Եվան մինչև կենաց ծառի պտղի ճաշակումը եղել է անանուն, Ադամն է նրա անվանադիրը: Հին կտակարանի հայերեն թարգմանության մեջ Եվան կոչվում է իր ստուգաբանական անունով՝ «Կյանք». «Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ Կեանս, զի նա է մայր ամենայն կենդանեաց»* [Ծնունդք Գ, Հ]*: Այսինքն՝ դառնում է նախամայր բոլոր արարածների համար և, ինչպես հավաստում է Վ. Տոպորովը, Եվայի անունը կարծեք թե փոխարինել է կենաց ծառի անվանը*[21]*:*

Առհասարակ Եվայի ծագման ու կերպարի, նրա գործառույթների մեջ և Ադամի հետ ունեցած հարաբերություններում բացահայտ նկատելի են երկվորյակային մոտիվներ: Ըստ Հին կտակարանի, Աստված նրան ստեղծում է քնած Ադամի կողոսկրից, այսինքն՝ նույն մարմնից, որ բնորոշ է երկվորյակների մարմնակազմությանը. «Եւ շինեաց Տէր Աստուած զկողն զոր առ յԱդամայ ի կին, և ած զնա առ Ադամ: Եւ ասէ Ադամ. Այս այժմիկ ոսկր ոսկերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմմէ. Սա կոչեսցի Կին, զի յառնէ իւրմէ առաւ… Եւ եղիցին երկուքն ի մարմին մի. Եւ էին երկոքեան մերկ, Ադամ և կին իւր և ոչ ամաչէին» [Ծնունդք Բ, 22–25]*:*

Ադամի և կնոջ մեկ մարմին ունենալու այս գաղափարը համեմատելի է հայ միջնադարյան կենդանակերպում հանդես եկող երկավոր-երկվորյակների պատկերում, ուր նրանք պատկերացված են մեկ մարմնով և զույգ պատանիների գլուխներով[22]*: Ոչ միայն Ադամի և Եվայի ամուսնության, այլև տարբեր ժողովուրդների առասպելական ավանդությունների մեջ պահպանված ընտանիքի կազմավորման վաղնջական պատկերա-*

---

[17] *Նույն տեղում:*

[18] *Նույն տեղում, էջ 122:*

[19] *Ա ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 300:*

[20] *Նույն տեղում, էջ 295–296:*

[21] Мифы народов мира, т. I, с. 397.

[22] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, էջ 339:*

ցումներում ամուսնաընտանեկան հարաբերությունների սկզբնավորումը համընկնում է մարդկային ցեղի սկզբնավորման հետ: Եվ ապա, յուրաքանչյուր էթնիկական հանրույթ ունի տվյալ ցեղը սկզբնավորող նախահայր ու նախամայր, որոնց ծագումը արենակցական է, այսինքն՝ միևնույն ծնողական հիմքից գոյացած տարասեռ երկվորյակները մտնում են սեռական հարաբերության մեջ, առանց պատմական ուշ շրջանում ձևավորված արենապղծման (ինցեստ) արգելակող գաղափարի: Եվ ամենասուրբ ամուսնությունը, ըստ այդ վաղնջական հայացքի, տարասեռ երկվորյակների միջև ծագած սեռական հարաբերություններն են: Այդպիսիք են հնդիրանական ավանդության Յամա և Յիմա (որոնք, ի դեպ, ինցեստի գիտակցությամբ հրաժարվում են կենակցելուց), ավեստական Յիմա և Յիմակ, եգիպտական Օսիրիս և Իսիդա տարասեռ զույգերը և այլք: Արենակցական ամուսնության այս նախնադարյան ձևը թեկուզ հետագայում շատ ցեղերի կենցաղից վերանում է, սակայն դրվում է ժամանակների սկզբում, դառնում է սրբազան ինցեստի նախադեպ ու նախօրինակ[23] և պահպանվում է շատ ցեղերի ու ցեղախմբերի հիշողության մեջ՝ իբրև առասպելական վերապրուկ հնօրյա անցյալի ամուսնաընտանեկան նախնական հարաբերությունների: Այսուհանդերձ էթնիկական (զրադաշտական պարսիկներ) և սոցիալական որոշ խմբերում (Արևելքի, մասնավորապես փարավոնների էլիտար վերնախավային միջավայր) այս երևույթը պահպանվում էր:

Մեր կարծիքով, հետագայի հարսանեկան ծիսական սովորույթներում իբրև նախասկզբնական սրբազան վերապրուկ նոր իմաստավորումներով ու ձևափոխություններով շարունակել է գոյատևել այդ արքետիպն իր երկվորյակային մնացուկներով՝ հարսի ու փեսայի մեկ հոգու և մեկ մարմնի միասնությամբ, հարսի ու փեսայի ծառային սիմվոլիկ վերամարմնավորմամբ, որն իր վրայի ծաղիկներով, պտուղներով, ճյուղերով ու տերևներով իր մեջ է խտացնում ամուսնական ծեսի պտղավորման, սերնդավորման ողջ խորհուրդն ու իմաստաբանությունը: Այդ է վկայում նաև Սասունից (Հազո) գրառված կնքամոր և ազապ աղջիկների կողմից կատարվող նորահարսի ծիսական հանդերձավորման մասին երգի հետևյալ տողերը.

Ծառս կենաց ծաղիկ անթառամելի,
Լուսեղեն խորան, տաճար գովելի,
Հաճեցավ ի քեզ Տերն բոլորի
Որպես սուրբ կույս Մարիամի մայր Մանուելի[24]:

Երգի հենց առաջին տողում նորահարսն անվանված է ու փոխարինված անթառամ ծաղիկ ունեցող կենաց ծառով:

---

[23] Мифы народов мира, т. I, с. 546.

[24] *Տե՛ս Ռ. Նահապետյան. Աղձնիքահայերի ամուսնաընտանեկան սովորույթներն ու ծեսերը, Երևան, 2007, էջ 230:*

Հարսանեկան ծառը, որ, փաստորեն, նորափեսայի սեփականությունն է («Թագւոր, քոյ ծառտ էր նշենի, թագւոր, զինչ պիտեայ, որ քոյ ծառին..գովքն ասէյանք»), խորհրդանշում է նորահարս թագուհուն, որը նորափեսայի հետ զույգ է կազմում և ծաղկում ու փթթում է նորափեսայի զուգության շնորհիվ: Ուշագրավ է թագվորագովքի միջնադարյան քննարկվող տարբերակում առկա փեսայի ծառին տրվող հոմանիշային անվանումները. «Թագւոր, քոյ ծառտ էր խնկենի», այնուհետև արմավենի, նշենի, նռնենի, մորենի, թզենի, նռենի, խնձորենի[25]*:*

Խնկի ծառը կամ ծառ խնկենին մեր ժողովրդական հավատալիքներում սուրբ ծառ է, որ բուսնում է դրախտում, մնացածները խիստ պտղառատ են և դրանք, բացառությամբ նռենու, մեծ տեղ են գրավում սիրո երգերում՝ իբրև սիրո խորհրդանիշներ: Ամենաուշագրավն այն է, որ փեսայի կենաց ծառի գովաբանողները ոչ թե մարդիկ են, այլ կենդանական աշխարհի այնպիսի ներկայացուցիչներ, որոնցից յուրաքանչյուրը հայոց հավատալիքներում աչքի է ընկնում իր պաշտամունքով: Դրանք են՝ Խօսուն Պիւլպիւլն, Դաշտի եղնիկը, Գառն Արէգույնը, Քօշն ի Քարէն (= քարայծ) և Արդար Մեղուն, որը, ինչպես երգում է ասված, «Քաղցր ծաղկունքն ժողովէյանք, Քաղցրաճաշակ մեղր շինէյանք. Եւ մոմն աստուծոյ փէշքեաշ տայանք»[26]*:*

Այդպես այդ ծավալուն երգի մեջ գրեթե բոլոր գործող անձինք բնության ներկայացուցիչներ են, և նրանց գովաբանած թագվորածառը իր բացված շքեղ ծաղիկներով, պտուղներով, ճյուղերով ու տերևներով նույնքան բնական է, առինքնող և իր ծիսական նպատակասլացությամբ կատարյալ խորհրդանշային բանաստեղծություն:

Այսպիսով, տարբեր ժողովուրդների նախնադարյան հավատալիքներում և պատկերացումներում հանդես են գալիս երկվորյակների համանման դրսևորումներ, ըստ որում կինը կապվում է կենաց ծառի հետ: Այս հանգամանքը դրսևորվում է տարբեր ժողովուրդների հարսանեկան ծիսական արարողություններում՝ իբրև հնագույն պատկերացումների վերապրուկ:

БЛИЗНЕЦЫ В ПЕРВОБЫТНЫХ ВЕРОВАНИЯХ И ПРЕДСТАВЛЕНИЯХ

ЛУСИНЕ КРЕДЖЯН

Р е з ю м е

В разных жанрах древнеармянского фольклора (загадка, пословица, предание и пр.) проявляется культ священных близнецов как символьные образы Неба и Земли, Солнца и Луны, которые представляются как первичные пары разных близнецов и их развивающиеся инцестные отношения. На этом фоне изучается связь женщины с Мировым деревом или Древом Жизни. Этот последний мотив ярко выражается в мифах и ритуалах, первобытных брачно-семейных отношениях, один из пережитков которых сохранялся в свадебных обы-

[25] *Ա ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 294:*

[26] *Նույն տեղում, էջ 293:*

чаях, особенно в дереве жениха, символизирующем новобрачную невесту как близнечную пару жениха, его собственность, ее расцветание, оплодотворение.

TWINS IN PRISTINE CREEDS AND IDEAS

LOUSINE GHREJYAN

S u m m a r y

In different types of genres of ancient Armenian folk-lore (riddles, proverbs, legends, etc.) the worship for sacred twins is revealed as the symbolic images of the Sky and the Earth, the Sun and the Moon which are introduced as initial pairs of different twins and their developing relations. On this background the connection of women with the World Tree and the Tree of Life is being studied. This last motive is vividly expressed in myths and rituals, primitive conjugal-family relations, one of the survivals of which is kept in wedding customs, especially symbolizing newly-married bride, her prosperity, impregnation as a twins pair of the bridegroom and his property.